

պատահարը, որուն մանրամասն պատմութիւնը Տըթթ. Սեւեան ինքը գրած էր ինչ հերուն:

Ֆէրրոլի նաւահանգիստն, Ֆէրֆէի հրամանատարներուն բազմազաղ մէկ օրը, նաւատիներէն 30 հոգի ցամաք ելլելով, խոյս կուտան, կը ցրուին այլեւայլ կողմեր, եւ ալ նաւին դառնար: Երկար փնտրողներէ վերջը կարելի չ'ըլլար անոնց հետքը գտնէ գտնել, դիւրին է երեւակայել, թէ Բնչ դժուարին կացութեան կը մատնուի շոգենաւին Հրամանատարութիւնը, այս փախստական դասալքներուն համար, մանաւանդ որ, Օսմանեան եւ Սպանիական տէրութեանց միջեւ ալ տակաւին գոյութիւն չունէր որ եւ է պայմանագրութիւն, որպէս զի ըստ այնմ կարելի ըլլար զանոնք պայանջել տեղական կառավարութեանէն:

Կենաց եւ մահու այս տխուր օրերուն մէջն է ահա, որ Տըթթ. Սեւեան հայկական բնածին մարդասիրական պարտականութենէն մղուած, ջանք կ'ընէ օգտակար հանդիսանալու եւ իւր ջանքն յաջողութեամբ կը պսակի:

Երբ ամէն յոյս ի դերեւ կ'ըլլէ, Տըթթ. Սեւեան ձեռք կ'առնու իւր գրիչը, եւ անմիջապէս կը շարագրէ սրտաուռ աղերսագիր մը ուղղեալ առ Եղիսարէթ Բ. Թագուհին՝ որ այն ատենը կը տիրէր Սպանիոյ գահուն:

Այս աղերսագրին մէջ, Սեւեան՝ պարզելով վեհապետներու առ միմեանս ունեցած փոխադարձ յարգանաց եւ բարեկամութեան բարձր գաղափարները, թուելով խոհական քաղաքականութեան մեծամեծ օգուտներն ու բարիքը, կ'ըսէր թէ՛ երբ երկու վեհապետ զիրար ատելու պատճառ մը չունին, պարտաւոր են դժուարին պարագաներու մէջ իրարու օգնական եւ զօրավիգն հանդիսանալ, ուստի կը խնդրէր որ հաճէր ամէն կողմ հրաման արձակել, փախստական զինուորները գտնելու, եւ զանոնք Օսմանեան մարտանաւը դարձնելու:

Ամիս ու կէս վերջը սպանիական կառավարութիւնը կորսուած 30 զինուորները ձեռք կ'անցընէր, կը բերէր կը յանձնէր զանոնք Ֆէրֆէի հրամանատարին, եւ այս՝ շնորհիւ Տըթթ. Սեւեանի ազգու աղերսագրին, զոր սիրայօժար կը կցէի այս կենսագրութեան, եթէ օրինակն ունենալ կարելի ըլլար ինձ:

Ի չգոյէ այս աղերսագրին պատճէնին, կը ներկայացընեմ հոս այն համակրական նամակը, զոր Ֆէրրոլի սպանիական նաւատորմին ընդհանուր Հրամանատարը՝ ծովագետ Մառտինէզ Գամպոյղ, 1858 ապրիլ 23 թուականով ուղ-

ղած է Տըթթ. Սեւեանի, ի դիմաց Եղիսարէթ Բ. Թագուհւոյն Սպանիոյ, աւասիկ.

CAPITANIA GENERAL

de Marina del Departamento de Ferrol.

FERROL, 23 de Abril de 1858.

Muy Sr. mio

En el momento de hacerse á la vela el navio de la Marina imperial otomana Fethié, en que V. ejera con tanto acerto el destino de primer medico, debo manifestar á V. con particular satisfaccion mia que la conducta que ha observado V. desde la recalada de aquel buque á la costa septentrional de España el dia muve de Octubre ultimo, ha sido altamente meritoria. Que á su celo, talento, tacto y conocimiento de los idiomas español y frances se debe en gran manera, la buena armonia y las relaciones de amistad y de aprecio recíproco que han mediado, sen alteracion alguna, entre el capitan, los oficiales y el equipaji del Fethié, y las autoridades y la poblacion de este Departamento, en que V. ha intervenido siempre con la doble calidad de agente confidencial y de intérprete.

Por lo que á me toca debo manifestar á V. que estoy completamente satisfecho de la manera atenta y acertada con que ha dirigido todos los negocios que el Comandante del navio ha puesto á su cuidado, lo mismo que los que yo le he encomendado; y que me considero obligado por tanto á dar á V. las gracias mas espresivas por lo mucho que ha contribuido á la feliz terminacion de todas las operaciones que ha sido necesario hacer para la reparacion de las averias del Fethié y para atender á quantas necesidades han podido ocurirle desde su Clegada á este pais.

Reciba V. pues con la espresion de mi sincero reconocimiento, la seguridad del distinguido aprecio y consideracion con que soy su muy atento servidor

J<sup>n</sup> José Martinez

Capitan general de Marina del Departamento de Ferrol.

1858 Ապրիլ 29ին Ֆէրֆէ Օսմանեան մարտանաւն իւր նորոգութիւնները կատարած, կը մեկնի Ֆէրրոլէն ու կ'երթայ Բլիմութ Անգլիոյ, աւելի կատարեալ կերպով նորոգուելու եւ մէքենաներն առնելու:

Ֆէրֆէն ամբողջ տարի մը կը մնայ Բլիմութ, ուսկից 1859 Ապրիլ 18ին ճամբայ ելլելով, քսանօրեայ հանդարտ գնացքէ վերջ, կը հասնի Կ. Պոլսոյ նաւահանգիստը՝ 1859 Մայիս 8ին:

Ֆէրֆէն Սուլթան Մէճիտ Կայսեր անձնական զբօսանաւն էր, այս նաւով է որ ճամբորդած է, Սելանիկ եւ Սաքըզ 1859 Յուլիս 15ին, որ ատեն Տըթթ. Սեւեան դարձեալ այս շոգենաւին առաջին բժիշկը կ'ըլլայ եւ իւր բարեօք ծառայութեանց ու բժշկական ծարտարութեանց համար՝ կ'արժանանայ Կայսերական բարձր շնորհաց:

Կայսերական ուղեւորութենէն ետքը, Տըթթ. Սեւեան նոյն տարի Սեպտեմբերին դարձեալ կը